ձորերու և լերանց երկրաբանական և բարձրակափական քննութեամբն, Գոլօնիոյ և Ռուտինէյինն՝ ճանապարհորդութեամբք։

Անշուշտ բնապատմից հետաքրքրական է իմանալ թէ ով եղաւ չորս ազգաց մէջ առաջինն։ — Համազգային դատաւորաց քննութիւնն և որոշումն կը հանգչեցընէ զմիտս. Աւստրիոյ և Զուիցերիոյ՝ առաջին, մինչդեռ Գաղղիոյ և Իտալիոյ երկրորդ մրցանակք պարգևի շնորհուեցան։

* * *

Մարդկային համբերութեան և անխոնջութեան օրինակներ.

Ռուսումեական մատեանն «Յաղագս ձկանց, խեցեմորթից, թեփամորթից՝ որք բնակին 'ի ծովն և 'ի ծոցն Վենետկոյ», ներկայացուցեալ 'ի պատկերի լուսատուերովք և գունովք 'ի Ստեփանոսէ Գերեկին. երկոտասան հատոր ձեռագիր, առաջին անգամ դրուած 'ի տես հասարակաց. ճանչնալու արժանաւոր աշխատութիւն մը։

Ազըլիականի 230 մամուլ, ժողովեալ և դասաւորեալ 'ի Գրիլանովիչ նաւապետէ, մեծ համբերութեամբ և ընտիր բուսաբանի ջանիւք։ Հաւաքումը քննելով կը զարմանաս այս ծովային բուսոց ձևոյն և գունոց վրայ — բնութեան հրաշալիք են։

Գոնդլին ճարտարապետին տարւոյ մը մակընթացութեան և տեղատուութեան քննութիւնները 'ի ծովակն Վենետկոյ, բովանդակեալ յ355 թերթս, իւրաքանչիւր օրուանն նկարուած էր ոչ միայն մակարդակի ձևով, այլ և բոլորաձև՝ ունելով զբևեռ 'ի կեդրոն. արդարև արժանի զարմացման վարժ անգղիական սպայից։

Ճաբոնի 720 բուսոց հաւաքումն՝ երկրին պատմութիւնն և քննութիւնն է, և որչափ բուսցընել և զարդարելը գիտնալ։ Դարձեալ եթէ ուզենք նոյն պետութեան 30 գլխաւոր ծառոց զաղափար մ'առնուլ, ահաւասիկ իւրաքանչիւր փայտի տեսակէն շրջանակ մը, տախտակն յատակն կը ձևացընէ, կեղևն շրջանակը, և փայտին վրայ նկարեալ են տերևք, ծաղիկք և պտուղք ծառոյն։

Պուտա–Բեշդի ուսուցիչն Տէցցը Պէլա դրած էր հաւաքում մը 100 սպնգաց 'ի քարայեալ վիճակի, ժողոված շատ մը ծովերէ, զտուած և մաքրուած։ Դարձեալ շոգեկառաց ընկերութիւնն՝ Հունգարիոյ փայտային 170 բուսոց հաւաքում մը, յորս առանձին պարունակուած էին ճիւղերն, տերևները, ծաղիկներն և փայտեայ կտորներն։

Ուրեմն կ'երևի 'ի բազում գլխոց որ բնական գիտութեանց համար՝ մարդկութեան անխոնջ աշխատութիւնքն և տևողական համբերութիւնն են յառաջացնողք, այսինքն է փորձառականն առաջնորդ 'ի ճանաչումն օրինաց աշխարհիս և արեգերաց։

---

ՎԻՆՆԱՅԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ. — Քիչ ատենէն Աւստրիոյ մայրաքաղաքին մէջ ձեռք պիտի զարնեն մայրաքաղաքական երկաթուղի մը շինելու, որ 100-120 միլիոն ֆրանգաց ծախք մը կ'ուզէ։ Ճամբան մեծաւ մասամբ հոյակապ և հաստատուն անցից վրայ պիտի ձըգուի, քիչ տեղեր ստորերկրեայ ճամբաներու մէջ։ Դրամագլուխը անգղիական ընկերութիւն մը հոգացեր է, և ճարտարապետական ուսման պիտի առաջնորդէն անգղիական և աւստրիական պայմանով մը ճարտարապետք։ Վարչութիւնն արդէն իր հաւանութիւնը տուած է, և Վեննոյի թաղական տեսչութեան հետ վերջին պայմաններն լմնցընելէն ետքը, փութկոտ արագութեամբ աշխատութիւնքը յառաջ պիտի մղեն։

Ճարտարապետք՝ որ մասնաւոր կերպով այցելութիւն ըրին Միացեալ-Նահանգաց, Պեռլինու, Ամստերտամի, Լոնտրայի, Բարիզու, այն տեղեաց գործածած ձգողութեան դրութիւնքը քննելու համար, առանց վառարանի մեքենային ընտրեցին։

digitised by A.R.A.R.@